ՊԱՇՏՕՆԱԿԱՆԹ

**

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ Վ.ԵՂ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ա.

Հայրապետական տնօրինութիւնք.

Կոնդակ յանուն Տ. Եղիշէ վարդապետի, միաբանի վանուցն Սևանայ, և պատգամաւորաց ժողովրդեանն Ցամաքաբերդ գեղջ վասն հանգանակութեան յօգուտ շինութեան եկեղեցւոյ գեղջն։ Թ. 562.

— Ցանուն Տ. Փոխանորդի թեմակալին Երևանայ, պատուիրի առնել նոր ընտրութիւն գործակալի Նորոյ Բայազիտի։ Թ. 568.

— Ցանուն վանական Կառավարութեան, որում պատուիրի տալ 50 ր. ճանապարհածախս Ներսէս վարդապետի Մելիք-Թանգեան վասն գնալոյ ի Տփխիս և վերադառնալոյ պաշտօնական գործով։ Թ. 575.

— Ցանուն Տ. Գէորգ արքեպիսկոպոսի Երէցեան, որում յայտ առնի ուրախութիւն վասն ճշտութեան հաշուոց Ս. Երուսաղեմի։ Թ. 590.

— Ցանուն Առաջնորդին Արցախու Տ. Աշոտ եպիսկոպոսի վասն կարգման Տէր Վահան վարդապետի ի վանահայր վանուցն Ամարասայ։ Թ. 622.

— Ցանուն Կոնսիստորիային Երևանայ, որում պատուէր տուաւ որոշել զ5480 ր. 50 կ., եթէ որչափն յայսցանէ արդիւնք են մոմավաճառութեան և որչափն պատկանի եկեղեցեացն Ալէքսանդրապոլի և դարձուցանել զայնս ըստ պատկանելեաց. Թ. 629.

— Ցանուն Կոնսիստորիային Բեսսարաբիոյ. լուծաւ պսակն Յովհաննու. Սահակեան Վանեցւոյ ընդ Մարեմայ Խաչատրեան և արտօնեցաւ կինն ի վերստին ամուսնութիւն. Թ. 638.

— Ցանուն վանական Կառավարութեան Մայր Աթոռոյ, որում պատուէր տուաւ տալ որբոց Հիւրատան ճանապարհածախս և առաքել զնոսա ի Հայրենիս. Թ. 672.

— Ցանուն Սինոդին Ս. Էջմիածնի, ըստ որում վերադարձուցաւ օրագիր Թ. 362 և պատուիրեցաւ վճարել Իշխան Սումբատովի զպարտիս եկեղեցւոյն Ջգրաշինի Տփխեաց. Թ. 689.

— Ցանուն Տ. Մատթէոս վարդապետի, որ կարգեցաւ յաջորդ վիճակին Ալեքսանդրապոլի. Թ. 693.

— Ցանուն Սինոդի ի նոյն միտս. Թ. 694.

— Ցանուն Տ. Խաչիկ Ծ. վարդապետի, որում թոյլատրի շարունակել զժողովումն Նուիրանաց վասն պեղման Զուարթնոց եկեղեցւոյ. Թ. 705.

— Ցանուն Հոգևոր կառավարութեանն Տաթևու, որում պատուիրի տալ Տ. Ստեփան և Տ. Սիմէոն վարդապետաց իւրաքանչիւրում 30 ր. առ ամիսն. Թ. 706.

— Ցանուն Տ. Կիւրեղ վարդապետի, որ կարգի վանահայր վանուցն Երնջակայ. Թ. 709.

— Ցանուն Կոնսիստորիային Երևանայ վասն տալոյ փոխարինաբար Տ. Կիւրեղ վարդապետի միանուագ ռուբլիս 300, իսկ ի 1-էն Մայիսի ցվախճան Նոյեմբերի 50 ր. առ ամիսն, զորս բառնալ ի գումարաց վանուցն, որք գտանին առ կառավարութեանն Կովկասու. Թ. 710.

— Ցանուն Սինոդին Ս. Էջմիածնի, որում պատուէր տուաւ ստանալ զհաճութիւն Պ. Նահանգապետին Երևանայ վասն կարգման Տ. Կիւրեղ վարդապետի ի վանահայր վանուցն Երնջակայ. Թ. 711.

— Ցանուն Հոգևոր Կառավարութեանն Հնոյն Նախիջևանի վասն յանձնելոյ զվանան Երնջակայ Տ. Կիւրեղ վարդապետի և տալոյ ճանապարհածախս Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոսի ցՄայր Աթոռ. Թ. 712,

— Ցանուն Տ. Գէորգայ Արքեպիսկոպոսի Սուրէնեանց, որում պատուիրի վարել զգործս Մայր Աթոռոյ ի բացակայութեան Ն. Վեհափառութեան. Թ. 731.

— Ցանուն Տ. Եփրեմ վարդապետի, կառավարչի կալուածոց Մայր Աթոռոյ ի Տփխիս. պատուիրի տալ Տ. Ղևոնդ եպիսկոպոսի 200 ր. նպաստ, որով հոգասցէ զծախս բժշկութեան իւրոյ. Թ. 732.

— Ցանուն Սինոդի, վասն կարգելոյ զՏէր Բառնաբաս վարդապետն ի վանահայր վանուցն Մուղնւոյ. Թ. 758.

— Ցանուն Բառնաբաս վարդապետի ի նոյն միտս. Թ. 759.

— Ցանուն Տ. Իսահակ վարդապետի Տէր Միքայէլեան, որ արտօնի գնալ ի Ռուսաստան ի կատարելագործել զուսումն իւր. Թ. 762.

— Ցանուն Սինոդի, որում պատուիրի տալ Տ. Իսահակ վարդապետի 50 ր. առ ամիսն. Թ. 761.

— Ցանուն կտակակատարաց հանգուցեալ Ա. Բ. Ղուկասեանցի, որոց ծանուցաւ զընտրութեանց աշխարհական թեկնածուաց յուսանողութիւն, Գէորգայ Ալթունեան, Յովհաննու Կարապետեան և Ռուբինի Աբրահամեան. Թ. 763.

— Ցանուն լուսարարապետի Մայր Աթոռոյ Տ. Ղևոնդայ եպիսկոպոսի, որում ծանուցանի կարգումն Տ. Իսրայէլ սարկաւագի ի դպրապետութիւն Մայր Տաճարի վանուցս. Թ. 766.

— Ցանուն Սինոդի, որում պատուիրի կարգել զոմն

ի միաբանից Մայր Աթոռոյ նախագահ վարչութեանն տպարանի։ Թ. 773.

— Ցանուն Սինոդի, որում պատուիրի լրացուցանել զկազմ վանական կառավարութեան։ Թ. 774.

— Ցանուն Տ. Ներսէս վարդապետի Մելիք-Թանգեան, հրաժարական որոյ ի պաշտամանէ Դիւանապետութեան ընդունելի եղև։ Թ. 783.

— Ցանուն Տ. Մեսրոպ վարդապետի Մաքսուդեան, որ կարգեցաւ ժամանակաւոր Դիւանապետ. Թ. 758.

— Ցանուն Տ. Սարգիս եպիսկոպոսի վանահօր վանուցն Սևանայ, որում պատուէր տուաւ մկրտել զպարսիկ Ալի Սաֆարն Դաւրիժեցի և տալ նմա վկայական մկրտութեան. Թ. 791.

— Ցանուն Սինոդի, որում պատուիրեցաւ տալ Տ. Իսահակ վարդապետի զ250 ր. պահանջս նորա և ճանապարհածախս։ Թ. 792.

— Ցանուն Տ. Եփրեմ վարդապետի՝ վասն տալոյ ի կալուածական արդեանց զհարկաւորեալ գումարն Կոնսիտորիային Վրաստանի առ ի հոգալոյ զծախս Ն. Վեհափառութեան ի Տփխիս։ Թ. 798.

— Ցանուն վարչութեան Ղուկասեան կրօնապատմական Թանգարանին վանուց Մայր եկեղեցւոյն Տփխեաց, յաղագս օրհնութեան և հաստատութեան կանոնադրութեան նորին։ Թ. 815.

— Ցանուն Սինոդի, որում տուաւ տեղեկութիւն զարձակմանէ Տ. Ուխտանէս վարդապետի ի պաշտամանէ գործակալութեանն Ախալքալակայ՝ ըստ խնդրանաց Տ. Առաքելոյդին Վրաստանի։ Թ. 849.

— Ցանուն եկեղեցական խորհրդոյն Հայոց Ս. Պետերբուրգի, որում պատուիրի տալ նպաստ 100 ր. առ ամիսն պ. Երուանդայ Լալայեանց ի 1-էն սեպտեմբերի տարւոյս

ցամս հինգ, զի պարապիցի միմիայն հետազօտութեանց հնագիտական և ազգագրական իրաց, զարդիւնս որոց ժողովեալ հաւաքեսցէ ի թանգարանի Մայր Աթոռոյս։ Թ. 850.

— Յանուն Խորհրդոյ Ազգագրական ընկերութեանն Հայոց վասն օրհնութեան, քաջալերութեան և հովանաւորութեան։ Թ. 851.

— Յանուն Տ. Անանեայ Արքեպիսկոպոսի, որում տայ դիտել զանօրինութիւնս զայսոսիկ. 1) վասն առ վասն վճարել զթոշակ Տ. Հմայեկայ վարդապետի, ըստ որում սուղ են միջոցք թեմին. 2) Կոնսիստորիայն թեմին առ ժամանակ մի միայն կարէ լինել առանց վարդապետ նահանգամոյ այլ ոչ միշտ. 3) Տ. Նիկողայոս վարդապետն Տ. Աւետիքեանց կարգի պաշտօնակատար վանահօր վանուցն Սաղիանու. 4) զերդմնեցուցչութիւն Նահանգական Դատարանին Բագուայ թողուլ ի Տէր Յովհաննէս քահանայն Նաջարեանց։

— Յանուն Կոնսիստորիային Վրաստանի վասն վճարման պարտուց Իշխան Սումբատովի 13000 ր. Թ. 864.

— Յանուն Սինոդի, որում տուաւ զիտել զկարգումն Տ. Նիկողայոս վարդապետի Տէր Աւետիքեանց ի պաշտօնակատար վանահօր վանուցն Սաղիանու։ Թ. 872։

— Յանուն Տ. Նիկողայոս վարդապետի Տէր Աւետիքեանց ի նոյն միտս։ Թ. 874.

— Յանուն Տ. Սահակայ Արքեպիսկոպոսի Այվազեանց, որում պատուիրի տալ ատիճան ծայրագունութեան Տ. Բագրատ վարդապետի Վարդազարեանց։ Թ. 903.

— Յանուն Հոգևոր Կառավարութեանն Հայոց Աղեքսանդրապոլի, որում բացատրեալ չեշտեցաւ իմաստ կոնդակի Նորին Վեհափառութեան ի 21 դեկտ. 1905 ամի համարաւ 1107։ Թ. 908.

— Յանուն Նորընտիր Կենդրոնական յանձնաժողովոյ հանգանակութեան ի նպաստ կարօտելոյ Տաճկահայոց։

որով հաստատին ընտրեալքն արք երկոտասան յանդամս նորին։ Թ. 918.

— Ցանուն Կոնսիստորիային Աստրախանայ, որով հաստատի նորընտիր հոգաբարձութիւն դպրոցին Լաբինսկայեա գեղջ։ Թ. 924.

— Ցանուն վանահօր վանուցն Ս. Խաչի Նորոյն Նախիջևանու, որում պատուիրեցաւ տալ Տ. Ներսէս վարդապետի Մելիք-Թանգեանց սենեակ, լուսաւորութիւն, վառելիք և յամիսն 50 ր. ռոճիկ։

— Ցանուն Սինոդի, որում պատուիրեցաւ յղել ի Տփխիս Տ. Խորէնայ վարդապետի Մուրադբեգեանց զռոճիկս յապրիլ ամսոյ տարւոյս հանդերձ սենդադրամով։ Թ. 936.

— Ցանուն Կոնսիստորիային Վրաստանի, որում տուաւ գիտել զլուծումն պսակի Կարապետի Այվազեան ընդ Անանայի Գէորգեան, որում թոյլ տուաւ մտանել յերկրորդ ամուսնութիւն, իսկ առնն՝ զկնի երկամեայ ապաշխարանաց միայն, Թ. 944.

— Ցանուն Սինոդի, որով վաւերական համարի պսակն Աշչակայ Առաքելեանց ընդ Վառինկան Գասպարեանց ի 6-երորդում աստիճանի ազգականութեան։

Բ.

Հայրապետական զոհունակութիւնք եւ օրհնութիւնք։

Կոնդակ օրհնութեան յանուն Մինասայ Ճորշորեան և այլոց վասն նուիրաբերութեան նոցա իւղանելիկ նկարու Ն. Ս. Օծութեան։ Թ. 589.

— Օրհնութեան յանուն Դոկտոր Ց. Թիրեաքեանի վասն մատուցանելոյ զթարգմանութիւն իւր «Աստաշիր Բաբական Կարնամակ»։ Թ. 667.

— Օրհնութեան յանուն հայ ժողովրդեանն Բագուայ և Նպաստաժամոյց յանձնաժողովոյ նորին արկածելոց և սովելոց Հայոց Կովկասու։ Թ. 673.

— Օրհնութեան յանուն երեսփոխանին ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն Հայոց Բագուայ Պ. Մինասայ Կաճկաճեանց վասն եռամեայ հաւատարիմ պաշտօնավարութեան նորա։ Թ. 674.

— Օրհնութեան յանուն Կարապետի Լալայեանց։ Թ. 675.

— Քահանայական լանջախաչի յանուն Տ. Խաչատուր քահանայի Կոտոյեանց։ Թ. 695.

— Օրհնութեան յանուն վարչութեան հայուհեաց բարեգործական ընկերութեանն Տփխեաց առթիւ 25 ամեայ յոբելինի։ Թ. 708.

— Քահանայական լանջախաչի յանուն Տ. Աբրահէն քահանայի Քիրքչեանց։ Թ. 720.

— Ցանուն Տ. Մկրտիչ քահանայի Տ. Ստեփանեանց ի նոյն վիճակ։ Թ. 721.

— Օրհնութեան յանուն հոգաբարձութեան դպրոցին Վարագայ վանուց առթիւ 50 ամեայ յոբելինի սորին։ Թ. 760.

— Քահանայական լանջախաչի յանուն Զաբեհ քահանայի Զէյթունեանց և Տ. Խաչատուր քահանայի Եղեկեանց։ Թ. 800 և 802.

— Կամիլաւկայի յանուն Տ. Բարդուղիմէոս քահանայի Մարկոսեանց, Տ. Սրապիոն աւ. քահանայի Տէր Յովհաննիսեանց և Տ. Վահան քահանայի Մեհրաբեանց։ Թ. 801, 803 և 832.

— Աւաք քահանայութեան յանուն Տ. Սահակ քահանայի Խախանեանց, Տ. Սահակ քահանայի Սահակեանց և Տ. Գրիգորիս քահանայի Երզնկեանց։ Թ. 804, 805 և 806.

— Օրհնութեան յանուն Բարեգործական ընկերութեանն Հայոց Եւրոպայոյ։ Թ. 912.

— Ցանուն Զաքարիայի Նազարբէգեանց ի նոյն միտս։ Թ. 913.

— Ցանուն Տ. Հայկանուշայ Ներսիսեանց Ագուլեցւոյ ի նոյն միտս, յաղագս նուիրաբերելոյ նորա ձեռն մի մեծագին զգեստուց վանուցն Ս. Թովմայ Առաքելոյ որ յԱգուլիս Թ. 870.

— Ցանուն Կուլտուրական միութեանն Հայոց Բագուայ ի նոյն միտս։ Թ. 901։

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

Ի 11-ն մայիսի Սինոդն հրամայեաց արձակել զՄարտիրոս Աւաք քահանայ ի պաշտամանէ կառավարչի Էջմիածնապատկան կալուածոց Ալեքսանդրապոլու ըստ խնդրանաց իւրոց և զկառավարութիւնն յանձն առնել հոգևոր Կառավարութեան տեղւոյն։ Պատուիրել հոգևոր Կառավարութեան վերաշինել զփլուզեալ կրպակն Մ. Աթոռոյ № 20, 21, ընդ առանձին հսկողութեամբ փոխանորդին Հ. 412.

Ի 15-ն մայիսի Սինոդն հրամայեաց թոյլ տալ Կոնստանտինոսիային Երևանայ ընդունել զԹաչատուրն Տ. Գալստեանց ի կոչումն հոգևոր և առաջադրել փոխ-թեմակալին Երևանայ ձեռնադրել զնա ի քահանայ Զռչի գեղջ վիճակին Կարուց։ Հ. 418.։

Ի 16-ն մայիսի Սինոդն հրամայեաց կարգել զԸնձակ վարդապետ քննիչ բողոքանաց ժողովրդական Էջմիլար գեղջ, որ վասն բողոքանաց զՄիմէոն քահանայ Թովմասեանէ և պահանջել ի հասարակութենէ գեղջն ռուբլիս քսան և հինգ ի ծախս քննիչին։ Հ. 423.